Կարգապահական գործ թիվ ԿԳ-20040

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021 թվականի փետրվարի 04-ի թիվ 206-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/107-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՆԱՐԵԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ՝ նաև Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի և Արմեն Ֆերոյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Նարեկ Գասպարյանին (արտոնագիր՝ թիվ 2034) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 28.07.2020թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Նարեկ Գասպարյանն **(այսուհետ՝ նաև Փաստաբան)** ունի 276.000 (երկու հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 03.08.2020թ. թիվ 170-Ա/ԿԳ-20040 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Փաստաբանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը 10.08.2020թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 04.02.2021թ., ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, 12 սենյակ):

3. **<u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>**

Փաստաբանը բացատրություն չի ներկայացրել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) Փաստաբանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 16.12.2015թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),

2) Փաստաբանն ունի 276.000 (երկու հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2015 թվականի նոյեմբերից 2020թ. հունիս (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն (այդ թվում՝ կարգապահական վարույթ հարուցելու որոշմանը նախորդող վեց ամսվա ժամանակահատվածի համար): Նշված փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 28.07.2020թ. տրամադրված տեղեկանքով:

3) Փաստաբանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 04.02.2021թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Փաստաբանի նկատմամբ 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ Փաստաբանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:*

Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ*:

<u>Կանոնագրքի 2.9.1 ենթակետի խախտման մասով</u>

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար*:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (**այսուհետ՝ նաև Կարգ**) 7-րդ կետի՝ *Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը,* իսկ Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ *Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Փաստաբանը խախտել է վերը նշված կանոնների պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրամադրված տեղեկանքով:

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ ….. *Փաստաբանի անդամավճարը վճարելու պարտավորությունը լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում, առաջին հերթին մարվում են փաստաբանի համար ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը՝ անկախ վճարման փաստաթղթում նշված նպատակից:* ***<u>Փաստաբանի անդամավճարի ժամկետանց պարտքի գումարը ինքնաշխատ ձևով միացվում է փաստաբանի անդամավճարի հերթական պարտքի գումարին և ենթակա է վճարման հերթական անդամավճարը վճարելու ժամկետում</u>***:

Պատասխանողը չի կատարել ամսական կտրվածքով անդամավճարները վճարելու իր պարտականությունը (այդ թվում՝ չի կատարել Պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման կայացման օրվա դրությամբ վերջին վեց ամիսների մասով անդամավճար վճարելու պարտականությունը):

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 2.9.1 ենթակետի խախտում:

<u>Կանոնագրքի 2.9.3 ենթակետի խախտման մասով</u>

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը Կանոնագրքի 9.1.3 ենթակետի դրույթը Պատասխանողի անդամավճարի պարտքի մասով կիրառելի չի համարում, հետևյալ փաստարկմամբ.

Կանոնագրքի 9.1.3 ենթակետը լրացվել է ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշման հիման վրա:

Օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ *փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված կարգով հրապարակվելու պահից, եթե փաստաբանների պալատի կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ*:

ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 7.12 և 7.13 կետերի համաձայն՝ ընդհանուր ժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Նշված իրավական ակտերից հետևում է, որ Կանոնագրքի 9.1.3 ենթակետն ուժի մեջ է մտել 2019թ. հոկտեմբերի 19-ից:

Փաստաբանների պալատի խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի 9.1.3 ենթակետում նշված 18 ամիսը պետք է հաշվարկել առնվազն 2019 թվականի հոկտեմբերի 20-ից հետո ընկած ժամանակահատվածի համար (20.10.2019թ.+ 18 ամիս=20.04.2021թ.): Հետևաբար, կուտակված անդամավճարները չեն կարող Կանոնագրքի 9.1.3 ենթակետի իմաստով ներառվել 18 ամսվա հաշվարկի մեջ:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի 9.1.3 կետի մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

*****

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ կարգապահական տույժ կիրառելը Պատասխանողին չի ազատում անդամավճարի պարտավորությունից:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝

Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Նարեկ Գասպարյանին (արտոնագիր՝ թիվ 2034) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 17-րդ հոդվածի չորրորդ մասի, 19-րդ հոդվածի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Նարեկ Գասպարյանի (արտոնագիր՝ թիվ 2034) նկատմամբ կիրառել տույժ՝ նկատողություն:

3. Փաստաբան Նարեկ Գասպարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը՝ Կանոնագրքի 9.1.3 ենթակետի խախտման մասով, կարճել:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Նարեկ Գասպարյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան

04 փետրվարի 2021թ.
թիվ ԿԳ/107-Ա
ք. Երևան